

ուստի առաջ գոյացելով կամաց պահանջություն է այս գործը լուսաբանության համար առաջ դնելու համար:

66. Կող Պալստին քշեց ուր ձեն զնաց Մորայ Մէլիքի չառընք առջև կայնաւ: Մէլիք որ աէսաւ, ասաց ուր մշտինեթաց: «Ասած ու սիրուն էտայ տարէք զատ, ես խտոր նմուշ չառընամ»: Ետոյ ըերաւ թաշտ մը, տրեց ուր առջև: առձիի մը զարկեց ուր ճակատ, արուն թափաւ, թաշտ լցուց, բերեց մէկ կէօլէօն¹ թուղթ, էն արունով գրեց, օրօխկեց մէկն արևելեան թագաւորուն, մէկն արևեմտեան: մէկն հիւսիսին, մէկն հարաւին, որ եօթ փաշայ իրենց խեժելով դեան հիմտատ²: Մորայ մէլիք աէսաւ, որ շորս կողմէն ուր հիմտատներ կիսասնեն, ձէնով էս խաղն ասաց.

67. «Էկան որ էկան լսարիկ Յհէլներ, էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան թառ պեղ Յհէլներ, կէօ էկան լսարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան մուրուս կնոտուկներ, էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան ծալզ մուրուսաւարներ, էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան կըրկզուկներ³, էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան զռուանայ միչողներ, էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան նազարայ զարկողներ, էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան տուտուկ միչողներ էկան, կէօ խարիք խազար խամար»:

Էկան որ էկան տուտուկ միչողներ: Էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան շաւեռ⁴ քետշողներ, էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան տիւֆ զարկողներ, էկան կէօ խարիք խա- զար խամար»:

Էկան որ էկան եօն փաշութեն, չորս կողմ աշխրէն.

1 Խոյեցերէն կունու—լոյտ: 2 Օգնոթիւն: 3 Ահրէ, անմուրուց:

4 Վաղիեալ: 5 Ալիւոր, զաւամեալ: 6 Քեամանի, չութակ:

Եկան որ էկան իմ սէֆել¹ հեմտատ: Փարէ, մէլիք, որ ժարէ²:

68. Բակում անթիւ անխամար խեծել էկան, որ Խօշապայ գետ խառած ժամանակ՝ առջի էկողներ ջրի կէսն խմբցին, մինչըն էկողներ մնացած ջեւըն թամամ խմացին. իտիկ էկողներ գետի քէուներ³ լիզեցին. մնացած խեծելն էլ ժարաւ մնացին: Էկան խառան Պշէրկայ տաշտ⁴, վրան դարեկին: Երկնուց աստղերաց իրուսակ կէր, չոտըներաց չկէր: Զիւապ կօգորկեն մէլիքին. «Մեր աիւշման վո՛վ ի, որ խետ ինոր կուիւ աի անենք»:

69. Էն գիշեր Մորայ մէլիքի մէր իրեք էրազ տէսաւ: Քըսն որ խռանաւ, էլաւ էկաւ մէլիքի բառձի վերեվ նսանաւ, ասաց. «Ո՞րտի, ես կէս գիշերին էրազ մը տէսայ, Մորայ աստղն մութն խաւար էր, Սասնայ աստղն լոյսն պայծառ էր: Մէկ տիր էլ էրազ տէսայ, Սասնայ ձին կիւգէր կզարնէր Մորայ ձիւ մէջք կկոտըէր: Մէկ տիր էլ տէսայ, որ Սասնայ խոյ կուգէր կզարնէր, Մորայ խոյի վիզ կկոտըէր, կտանէր յանտիւնա, կկորցուցէր: Արե մէրթայ վեր էն գետաւուրին, իմ խոռքին ականջ արա»:

70.—Մէրիկ, ասաց մէլիք, Սասնու վերէն չէրթամ կէլնի. Էսայ եօթն փաշէք ուրենց խեծելով իկերեն. ես ի՞նչ ջեւղապ ուամ ուրենց:—Մէր ասաց, էտ կօլայնէ⁵, սրտի: Տիւ պէ ինոնց խլղաթի ճամփախ, ուրենց ասքըով⁶ էրթան ուրենց տեղը: Երբ քե կխարցուցին, թէ մե կանչելու պատճառն ինչ էր. տիւ ասա, ես չէի գիտեր, ձիկ ըսկնէմ ասքեար կէր. մկայ ձե կանչեցի իմացայ. ըստիւց սորայ երբ կուալ⁷ մը խետ ձիկ թշնամութեն անի, դայ վէրէս, ես էս կալողութենով ինոնց կանամ յաղթե: Տէ, էրթար բարով. ձեր տեղ գնացէք:

71. Սորա ասքեար որ քիչ մը զատացաւ փաշէքտեկաց մէջէն մէկն ասաց մէկալոնց: «Տիւք իմացա՞լ մէր ետ օղօրկելու պատճառն ինչ էր»:—Զէ, ասին: Պատմեց ինոնց թէ, Սասուն մէկ գետաւուր մը կայ. մէկ սլուլիկ գետաւուր մը ի: Ենոր վէրէն կուիւտի. էրթայինը՝ մէլիք չեշացաւ. ինոր խամար մէ ետ կը ճամփախ:

72. Էս խօսք որ մէլիքի ականճ խառաւ, զինք չկոտրելու խառամար ասքեար ետ կանչեց, ասաց. «Իմ կուիւ կուիւ է: Զեր տեղ նստեցէր, որ կուիկ էրթանք: Ետոյ ջիւապ խրկեց Սասնոյ գետաւորին թէ, կու գեան կուիւի, չէ թէ, ես կուգեամ քըոյ քետզաք ջրով ջրհեղեղով կընցուցեմ»:

1 Խեղմ: 2 Տկար: 3 Ցիխեր: 4 Գանեւում է: Գատուանոյ կողմերում: 5 Հեշտ, դիւրին է: 6 Զօրքով: 7 Քիւրգերն ասում են Թագաւորին. արդեօք նոյն Կարոլոս անունից, ինչպէս որ է ոլու լեզուներում:

թ. առաջ պարզա և մասնաւոր առաջարկագիր է:

73. Զէնով Յովան էս բան որ լոեց, գնաց մօտ Տաւեթն, պատմեց ու ասաց. «Մեր ձեռքէն չի դայ, որ ինոր խետ կուլինք, ինչին որ փիսցուցիր, ըսկուն էլ թամիզցուր»: Տաւեթն ասաց. «Ես ոչ ձի ունիմ, ոչ սիլախ. ձիկ սիլախ ու ձի տուէք, որ կուլի էրթամ»: Զէնով Յովան ասաց. «Գնա վակիսի¹ ձիերուց ձի մը՝ յօտի թուրուց էլ թուր մը ջօկի: որն որ կուղես»: Տաւեթ մտաւ վակախ, որ ձիու քետմկի վէրէն որ ձեռ տրեց, ձիու պոռան առեց գէտին: Են տեխ մէկ կռոտ² քիւռակ մը կէր. ձեռք վէրէն տրելուն պէս չեֆթէմ³ դարկեց պատին. կըակ մէնէն թռաւ: Էն ձին ընտրեց, թրերաց մէջէն էլ տանկռոտ թուր մը:

74. Երբ որ տիւրո խանեց, կարկի տռատի տէր խալիւր, որ տէտաւ, ասաց. «Տաւեթ, որտե, էտ ինչ պիտի անես»: — Ասաց կէրթամ վէր Մարտայ մէլիքին կուիւ: — Ասաց, որտե, իտոնցմով ի՞նչ կանսս անի մէլիքը անթիւ խեծելին: Քըոյ խօր կայ քիւռկու ջալալին: Թամբն սատափին, քամար ֆէնրուին⁴, թուրն կեծածակին, խօտէն զրին⁵, խաչն պատարագին, որ տնես վեր աջ թեւիտ, տքուպն⁶ քե չառնի:

75.— Տաւեթն ասաց. Խօրօխալէրո չի տայ: Ես ի՞նչին ինոր մօտէն աի առնեմ: — Խալիքւրն ասաց. գնա քեազաք եօթ տիկ եօթ տարուան գինի առ, քեր խմցուր քըոյ խօրօխալէրներաց. Երբ կ'սարխօշնան, ասա ինոնց, որ տան, որ չտիլին խաթթով, ասա կառնեմ իմ զօռակ: Տաւեթ խալիքւրի խրատ կատարեց, պատիւր տիւր ինոնց:

76. Երբ սարխօշցան, գէօվքով⁸ ասաց ինոնց. «Օքնեալ ըարեւար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն. Խօրօխալէր, ասաց Տաւեթ, իմ խօր կայ քիւռկու ջալալին, թուրն կեծակին, խաչն պատարագին: Կռւտաս քըոյ խաթթով, չէ կառնեմ զօռավ»:

77. Յովան ադխատ⁹, ասաց. «Տաւեթ, քըոյ բէրան կոտրէր, տիւ էտայ չասիր ձիկ»: Ետոյ տառձաւ ասաց.

«Տաւեթ, չունեմ եմ մէջաց որտին, որ քեմ¹⁰ կէնայ պէհն¹¹ մէլիքին»:

Չունեմ եմ քիւրոջ որտին. որ քեմ կէնայ պէհն մէլիքին:

1 Գոմ, ախոռ: 2 Անպէտր, քոստ: 5 Արացի, քացի:

4 Կարմիւ: 3 Գլխոյ զրահ: 6 Հարուած: 7 Կոչունք: 8 Գո-

մասանքով: 9 Ուշրի զալ, զգաստանալ: ընից զարթնել: 10 Պէմ:

11 Նէֆէսի տակ(?):

Չունեմ եմ ախալօք որտին, որ քեմ կէնայ պէհն մէլելին»:
78. Տաւիթ վէրցուց ասաց.

«Օքնեալ բարերար Առառւած,
Խնամք շատ էր մեծ թագաւորուն:
Խօրօխալէր խամ՝ մի անե.
Ես եմ քըոյ մէջաց որտին, որ քեմ կէնամ պէհն մէլելին»:

Ես եմ քըոյ քիւրոջ որտին, որ քեմ կէնամ պէհն մէլելին.
Ես եմ քըոյ ախալօք որտին, որ քեմ կէնամ պէհն մէլելին»:

79. Խօրօխալէրն առաւառուն էլաւ, ձին թախըմով Տաւիթի ըուլը ուղաճներով տվեց, ասաց. «Ո՛ո կընայ ես քե չաեսնամ. ինչի գիտես ըսկուն արա»: Տաւիթ առեց ձին, գնաց գեալ բէրան. Զէնով Յովան էլ գեախտիկ էրկու մարդ խտեւէն ճամփեց, ասաց. «Գնացէք աեսէք, թէ որ Տաւիթ ձիուն կօլան² քաշելու ժամանակ՝ ձիու չորս ոտ գէանէն կիտրցուցի խայր³, կանայ էն ձին զաւթէն»: Ասրդ որ, Տաւիթ երբ ձին գեալ մէջ լվաց, թամբն արեց վեր ձիուն, կօլան կըեց, ըսկուն քեաշեց, որ ձիու չորս ոտ չորս թիզ գէտնեն կտրաւ⁴, խասաւ չում ուր ձեկիւր:

80. Մարդեր գնացին, իրենց աեսած պատմեցին Զէնով Յովանին: Մհէր որ մեռեր էր՝ Զէնով Յովան չում էն օր սուզ կապեր էր՝ էս բան որ լսեց, նաղարէք զարնել տվեց, արին ուրախութեն, արին տօնախմբութեն, շատ ուրտիսացան:

81. Մարդ մը վաղեց գնաց վեր Տաւիթի մօր Սինամ Խաթունի էրտակին, ակընջկլայ⁵ տվեց, ասաց. «Սինամ խաթուն, տիւ ինչի մաեր ես հօֆուանի մէջ. էլի տես որ Տաւիթ ուր խօր չափին խասեր և ուր խօր քիւռակ խէծե, թուրը կապե, տի էլթայ վեր Մարայ մէլիքին կուիւ»: Տաւիթի մէր որ լսեց, թօղեց ուր սուզն, էլաւ տիւրս Տաւիթն տեսնալու: Խմացուցին Տաւիթին ուր մօր գալն. Տաւիթն ձիուց վար թռաւ գաղեց ուր մօր

1 Հոդ: 2 Փորքաշ: 3 Թէ որ: 4 Վերացաւ, բարձրացաւ: 5 Մուժայ(1): Երեւի Թուրքերէն մուշտըլլը բառը, Խոյեցիր առում են անկանալի ալէ, որ ինչպէս եւ ակընջկլայ-ն. կազմուած է հաւանօրէն ականչ եւ կալնուլ բասերից: Սովորաբար մի աւետիր, մանաւանդ արու դաւակի ծննդեան լուրը հաղորդելիս բռնում են դիմացինի ականչը. մինչու որ սա մի նույր է խոստանում:

գիրկն ինկեաւ, մէրն էլ ուր ըէրնով օրհնեց Տաւեթ ու Մորայ
ասքեալն անիծեց:

82. Տաւեթ ուր պատրաստութեն որ տէսաւ, քանի մը խա-
լուոր մարդ ժօղվեցին, Տաւեթին ինկեր տվին, ճամփեցին: Տա-
ւեթն էն խալիւորներուն վէրէն խզճաց, ասաց. «Ճիւք գնացէք
Շովասարու Մարութիւ բանձր Աստուածածին, ձիկ խամար
աղօթք արէք: Ես կէրթամ կռվելու»:

83. Տաւեթ գնաց խասաւ մէկ բարակ տուու մը, ձին չուզեց
ընցնել էն առվից, քեւնչի Մհէրն երթ Էնտեզ խասնէք, խանը՝
կառնէք: Տաւեթ տէսաւ, որ ձին չանցնե, եջաւ քնաւ: Ձին էլ
կայնաւ արևու գէմ, խօվ արեց վէրէն: Մարութիւ վանքի պա-
տարագ որ պաձան, խըեշտակն էկաւ իմացուց ձիուն, ձին էլ
Տաւեթին: Տաւեթն որ էլաւ նոտաւ, մէկ խատ փոքրնքաց,
ուր մէջ քեամար ֆէհըսին, որ քասսուն կիտք բամբակ տրեթէք
մէջ, կապէք էք, անջախ կէլնէք ուր մէջկով, վաւնքալուն պէս
քեամար կառտվաւ. ինքն, քեւնչի ահայ² պստիկ էք, էն գետի
ճըռնացաւ, լցուաւ, էլաւ չանց³ ուր խէք:

84. Էլաւ թռաւ վեր ձիուն, Աստծու անուն տվեց, քշեց խա-
սաւ Շովասարու մօտ, Էն քեամբերուց, ախպըներուց, սարեսուց
խալալութեն ուզեց: Մնաք բարով, ասաց ու սկսեց.

«Օրհնեալ բարերապ Աստուած, խնամք շատ էք մեծ թա-
դաւորուն:

Ծովասարու պազ պազ ախպընեք, մնացեք բարով, բարե
մնացեք:

Ես կէրթամ կուիւ, կծարվնամ, տիւք կարօտ մնացէք:

Շովասարու պազ պազ բեամիքն էլ մնացեք բարով, բա-
րի մնացեք:

Ես կէրթամ կուիւ, կշոգանամ, տիւք խով մնացէք:»

85. Ասաց ու քշեց գնաց խեծլի տիմաց, տէսաւ որ երկնուց
ասալին խխսապ կէք, ինսնց վրանին հիսապ չկէք: Էնտեզ եջաւ
նոտաւ, մէզեց վեր ուր հալին: Տարթլանմիշ⁴ եղաւ, ասեց.

«Օրհնեալ բարերապ Աստուած, խնամք շատ էք մեծ թա-
դաւորուն:

Ես էլնեմ գեարնան գէլ, ինոնք էլնեն գեարնան գեառ, չեմ
կանայ արնոտե:

Ինոնք էլնեն բամբակ, էս էլնեմ կրակ, չեմ կանայ մշտ-
իարեք:

Ինոնք էլնեն փուշն փալախ⁵, չոք ցալս, էս էլնեմ բոց
ու կրակ, չեմ կանայ վառե:

1 Հանգիստ: 2 Տակաւին, դեռ իւս: 3 Քանց: 4 Ցաւիր
դարտուել: 5 Սպիտակ խոտ:

Խնոնք էլնեն իրակ, ես էլնեմ գեարնան գետ, չեմ կանայ
ընցուցեա:

86. Ես խօսքի վէրէն Աստծու խնամքով ձին սկսեց խօսել ու
ասաց.

«Օքնեալ բարերար Աստուած,

Թնամք շատ էր մեծ թագաւորուն:

Տաւիթ խամ մի աներ:

Քոկում որ տիւ տիւ սպանես քըոյ խօր կեծակի թըովն, ես
տիւ սպանեմ իմ ուսաց ոմերով:

Ըսկում որ տիւ սպանես քըոյ կոսկերով, ես տը սպանեմ
իմ պոչի մազերով:

Ըսկում որ տիւ սպանես քըոյ սմերով, ես տիւ սպանեմ
իմ քթի շնչով»:

87. Տաւիթի սիրտ ձիու խօօքելով պնտեցաւ կանչեց.

«Օքնեալ բարերար Աստուած, ասաց, խնամք շատ էր
մեծ թագաւորուն»: Կանչեց խեծլին. «Որ ինչ արթիւն էք,
ձիանք թամքեցէք, որ ինչ քիւն՝ արթիւն մնացէք, ձեր ճարը
տեսէք, շառէք Տաւիթ դող էս, դուզութնով էկաւ վեր մե»:

88. Զի՞ն տառձաւ Տաւիթին, ասաց. «Կայիմ կաց վեր իմ քեամ-
կին. քե պիտի խանեմ խետ արէկական քըոյ քեամակն իրիցիւ—
Տաւիթն ասաց, տիւ օլրիւմ փորիտ տակ:—Զի՞ն ասաց, տիւ
իջնեմ չում գետին, քե զարկեմ տանեմ յանտիւթի, կորսցուցեմ:—
Տավիթն տիւ էլնեմ վեր քըոյ քեամկին, ասաց Տաւիթ, քշեց
մէջ խեծլին. եօթն օր ձին կռիւ արաց, ինքն շըշկաած մնաց
վեր ձիուն:

89. Զէնով Յովան իրիշկեց երկինք, տեսաւ որ Տաւիթի աստղն
նվազեր ի. վաղեց փակախ ուր սեւ լայեղ¹ ձիուն ասաց. «Տաւ-
իթի աստղ նվազեր ի»:—Զի՞ն ասաց, որ քե իմ քեամկի վէրէն քըո-
ւնես, տէիւ թօրթափ քե տիւ խասուցեմ Տաւիթին: Զէնով Յո-
վան թռաւ ձիու քեամակ. ձես թալեց մէկ բարտի ծառ, քէօք-
մանց քաշեց տիւրո. արաց ուր ճպոթ², խասաւ մէջ Մորայ
մէլիքի խեծլին. տէսաւ որ Տաւիթ շըշկուեր ի: Տաւիթին ասաց.
«Կայնի, ես քե կռիւ անել սորվեցուցեմ»: Ուր ճեռաց ճպոթ մէկ
մը աջ փարատեց, 300 հոգի մէկանց ինկան, մէկ մը ձախ փա-
րատեց. 600 հոգին թմրմաւ:

90. Տաւիթն ասաց. «Խօրօխապէք, տէ տիւ տէն քեաշուի, ես
տիւ կռվեմ»: Տաւիթն էր քեաշեց թուրն կեծակին, ասաց.

«Ցիշամ քիւ խէրն կենտամնին,

1 Արժանի. վայիլուչ:

2 Վարոց:

Մարտիթայ պահնձը Առուռա ածածին:

Պաշն պլատարագին, վեր աջ թեւին:

Բնկաւ մէջ Մարայ մէլիքի խեծլին, սոկում մարգ կարեց, որ արուն ըոկուն լերթաւ՝ թաւ ձրացաւ, սազ մարտեր կիւըւ-գին մէջ, չեն կանայ գեալ տիւր:

91. Առօրի մէջէն մէկ մարգ մը տիւրս էլաւ, մէկ գեազ² զար-կեց մէկ ականջ, մէկ էլ միւս ականջ, կանչեց. «Ճաւիթ փօշ, փօշ»: — Տաւիթն ասեց. ձիկ գէշ խապար կառես, ինչ առել է փօշ: — Մարգն ասաց. քե գէշ խապար չեմ ասե, ասել կուղեմ, թէ քըոյ ձին գատրցաւ, որ ինոր քեամին ձիկ չթալի, գեամ քե մէկ խապար ափ ասեմ: Երբ մօտացաւ, ասաց. «Ճաւիթ էս մարգեր խէրիք ջարտես. քըոյ տիւշման կէօ պառկեր ի կապու վրանի տակ, քեառսուն կիտր առճին տիւ վեր ուր որաին. Էս գեալս որ նաֆաս կիսանի, առճին կըանձրանայ չում վրանի առիք. Էս գեալս որ նաֆասն կըեաշի, առճին կիջնայ վեր ուր որտին»: — Տաւիթն ասաց, ես չեմ դիմէ, որ վրանի տակն ի: Մարգն ինկաւ առջեւ, տարու նշանց իսու:

92. Տաւիթ կայնու վեր վրան³ առան, աէսու որ մէտիքն պառկեր ի. Եօթն աղջիկ էլ ինոր չորս օխւլոր նոտած սաքեր կժուշենի: — Տաւիթն ասաց. վեր խանէք լատյ ձեր աղէն: — Ինսնք էլ ասին. Հալայ եօտն օր վաշարյ կայ, որ էն արթնայ: Տաւիթն էլ չխամբեաց, քաշեց մզրախ. զարկաւ մէլիքի կըռենկ ժակեց, կիտր մը աղ լցուց մէջ եարին: Ոէրիթե սաք որ մամաց, կծկեց ասաց. «Ողջիներ, էս անզ լիւ կայ. իմ քիւն խռանցուցին: — Տաւիթ մէլիքին ասաց. էլե վեր, լիւ չե, լվի ախպէրն ի:

93. Մէլիքն էլաւ վեր աեսաւ, որ արքնոտ մարգ մը կայնե ուր տիմաց, գիտաց որ Տաւիթ սպանալն ի, իկե որ խլզաթ⁴ առ-նի: Մէլիք ասաց.

«Օրհնեալ է բարերար Առուռած, խնամք շատ էր մեծ թագու որուն:

Թէ որ տիւ արեելըէն ես, ասմ քե վաշութեն:

Թէ որ արեմտէն ես, ասմ քե խազինայ:

Թէ որ հիւսիսայէն ես կամ հարաւայէն: ասմ քե աէօւ-վաթ⁵:

94. Տաւիթն վէրաւց ասաց: «Օրհնեալ է բարերար Առուռած, խնամք շատ էր մեծ թագաւորուն. ես քըոյ ասածներէն, մէկն ալ չեմ, և ոչ քըոյ երկրներէն. ես Սասնու Տաւթի մշակներէն եմ. տիւ քե անմալս կկարծես, ես քե մախ իկեր եմ»:

1 Կեարդի պէս պնդուիլք. 2 Փուշի տեսակ. 3 Կոյիցիր ասում ին ասմել—Եփել. 4 Պարզեւ նուր: 5 Հարստու թիւն:

95. Մէլիք ձեռք թալեց Տաւթի եալսէն, որ ձիուց վար բերէր,
Տաւիթ մզրախ զարկեց, ձեռ ծակեց: Մէլիքն ասաց: «Ճ՛ Տաւիթ,
Էն գետիս որ իմ ձեռք ծակեցիր, իմ ողջանց¹ զ՞նաց»: Կըկուռն
էլ կպան խետ մէկ մէկու կուր, չում իրիկուն քեալպաթին²
կը զարնէին, մէկ մէկէլից խոյտ մը միս կփացուցին. մէկ զմէկ
չյաղթեցին:

96. Մէկ էլ որ երբ էլան կռվելու, Տաւիթն ասաց մէլիքին.
«Տէօրիս³ պիտի կռվենք կիւռզով. երեք կիւռզ տի՛ւ ձիկ զարկ,
թէ որ ես ինկեայ, իմ վիզ կարե, իմ արուն քե խալալ էլնի,
թէ որ չինկեայ, երեք կիւռզ ես քե զարնեմ. թէ ինկեար,
քըոյ վիզ ամ կըտքեմ, քըոյ արուն ձիկ խալալ էլնի»: Տաւիթ
կայնաւ: Մէլիք երեք կիւռզ իզարե, երեքն էլ պէօշ գնաց:
Տաւիթն ասաց. «Մէլիք, տէօրիս տէօրն իմն ի. տէ տիւ կայնի,
ես զարնեմ»:

97. Մէլիք կայնաւ. մէրն նազարէք զարնել խտութ, որ Տաւիթ
շըշկառուի, չկանայ զարնել: Տաւիթ մօրն ասաց. «Էտայ նազարի
ձէներ կտրել տուր. ես մէկ կիւռզ Առածու խաթրին կըտշեմ,
մէկ կիւռզ էլ քըոյ մէրութնի խաթրին կըտշեմ. քիւնչի աիւ
երկուս էլ մէր ես. մէկ կիւռզ մենակ կդարկեմ քըոյ լաճուն.
ինկեռւ խոայ վիզ կկտրեմ, թէ չինկաւ, ուրիշ չէշիտ կուիւ
պիտի անենք»: Տաւիթն ասաց ու կիւռզ զարկաւ, իսկեղ մէ-
լիքն. վիզ ամ կտրէր, մէրն ինկաւ վեր Տաւթի ստաց, ասաց.
«Առածու սիրուն էլնի, քըոյ ախալէրն ի, վիզ մի կտրե. Թահլայ⁵
եօթ տիթ թող քըոյ թրի տէկն ընցնի, էլնի քե եկաիր՝ քե
խառն խարաճ առյ»: Տաւիթ բաշխեց ուր մօր խաթրին, թրի
տէկն եօթ տիթ ընցուցին, խէլամազ⁶ տուին, տարան տէն:

98. Երբ որ մէլիքի խելք վէրէն էկաւ մօր խնամքով, ասաց.
«Տաւթն ո՞ւր ե»: — Ասին ուրեն, հալ էլքաթ՝ էսպէս էզաւ: — Մէ-
լիքն ասաց. Երբ էկանի որ ես ինոր էսիր էլնեմ: Խմացաւ, որ
Տաւթ գետի ըէրան գնացեր ի. էլաւ խետ ուր մարդերաց 40
լիւծ գէօմէշ լծեց, մէկ ճոպանախուն⁷ զընճիլ մը քաշեցին
տարան, խարիւթեթնով Տաւթի չորս կողմ փաթթեցին, կա-
պեցին սերին վրանի տաւս. թրեր սրեցին, որ Տաւթի վիզ զար-
նին:

99. Զովան տէսաւ էրկնուց երես, որ Տաւթի ստաղ
նվազեր էր. Թուաւ ուր սիւ լայեղ ձիու քեամտէ քանձր ձէնով
մէկ խատ կանչեց: Տաւթ՝ որ ձէն լոեց միտն ինկաւ, ուր տէր
յիշեց, ասաց.

1 Կարոզութիւն՝ ոյժ: 2 Արցան: 3 Այժմ, ճիմայ: 4 Հերթը: 5 Միայն
թէ: 6 Խելացնոր: աշաղնաց: 7 Ճոպանի հաստաւթեամբ:

«Յիշամ քե լոէրն կենասնին,
Մարութայ բանձը Աստուածածին,
Խաչն պատարագին վեր աջ թեւին:
Քաշեց թուրն կեծակին, զարկաւ կտրեց ճօպանախան զըն-
ճին¹, կտրներն թռոն գնացին էն տեղ էլած առքըներ տափ
սաղազ արին:

100. Տաւիթն առաց. «Մէլիք. տէօրիս թըրով պիտի հովենք. մէկ
զմէկու իրեք թուր պիտի զարնենք»: Մէլիքն խաւնեցաւ ինոր
խօսքին ու տաշ² ինքն դարկեց Տաւիթին. իրեք առալն էլ պօշ
զնաց: Յետոյ Տաւիթ առաց. «Մարէ, իրեք տռալից մէկն Ասու-
ծու խաթրին կուտամ, մէկն քըոյ խաթրին, մէկ խամ կզարնեմ
քըոյ լաճուն»: Առաց ու զարկաւ, մէլիքն մէջքէն էրկու կտրն
արաց, առբաւ խորեց:

101. Էկաւ ինոր փաշէք, առքարներ, ինչ որ մնացել էր, կանչեց
ուր մօտ: Վէլիքի Խօսրով տղէն էլ բերեց, ինքն ուր ձեռքով
թուրն կապեց, արաց թագաւոր. Փաշէք առըներ Խլզաթեց,
ուրինց տեղեր ճամխեց. ինքն էլ ուր Երկիր գնաց: Էս փաշէք
ու առքներ, որ ցըլեցան չորս կողմ աշխըն, Տաւիթի արտծ
կտրնութին և Խօսրովին թագաւոր անելն ամէն տեղ պոտ-
մեցին:

Ժ.

102. Զէն գնաց ինկեաւ Կապոա Կողայ թագաւորի ականճ:
Թագաւորն էլաւ 40 ջուխտ աշըդ ճուխտ ճուխտ ճամխեց Երկրէ
Երկիր, որ կտրին Տաւիթ անուոր մարտեր ժողվեն քերեն տեսնայ,
թէ որ մէկն ի էն կտրին Տաւիթ, որ ուր ախջիկ՝ Խանտիւթ
խանըմ առայ ինոր կնիկ. 39 ջուխտ աշղներ մէյմէկ Տաւիթ կըն-
տան բերին. մնաց մէկ ջուխտ, որ գնացեր են Սասնայ քետ-
զաք Խանտիւթ խանըմի գովասանք անելու:

103. Էրկու աշղներ գնացին Սասուն 2էնով Յովանի տուն, տոին.
Վէկըի Կապոա Կողայ թագաւոր ճամխեց ի+ որ ինոր ախջիկ
Խանտիւթ խանըմի գովասանք անենք կտրին Տաւիթին և Խա-
ւըցուցենք, որ ուր կնիկ առնե»:—Առաց. Տաւիթն կօօ եմ.
ինչ որ կատէք իմ առջե տոէք: Խնոնք էլ ու բենց շընկիւռներ³
տոին նոտան, տոին.

«Որհնեալ բարեցար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւ-
որուն,

Աղջկան ծամեր քե կասեմ, Տաւիթ, 40 ճող ծամ էր.

Հակտիկ քե կասեմ, Տաւիթ, Հալապայ գաղն էր:

Աչքեր քե կասեմ, Տաւիթ, գինու կթղայ էր.

Մծկեր քե կասեմ, Տաւիթ, բամբկի քիւլայ էր,

Սրտիկ քե կասեմ. Տաւիթ, քիւռկու ճալալու մէյզան էր:

104. • Զէնով Յալան մէկեց, թէ էս աշղնես մեր Տաւիթ խելքէ ոլիսի խանեն, առեց ինոնց ըլնկիւ ուներ, զարկեց վեր ինոնց զլխուն՝ կոտուտեց, առւնէն տիւրու խանեց, որ էրթան ուրեւց երկիր: Աշղներ քաղըց էլան տիւրունստան Տաւիթն անիծեցին: Տաւիթ նէճիր անելուց էկաւ, տէսու, որ զինք կանիծեն, առաց. «Խօմարտեր, ձիկ ինչը կանիծէք»: Ինոնք էլ ասին. «Մենք քե չենք անիծե, Տաւիթ կանիծենք»: — Ինչի կանիծէք, առաց Տաւիթ: Ինոնք էլ պատասխան տիլին թէ. «Մենք Կապսա Կաղայ Թագաւորի կողմէն ճամփեցանք, որ ինոր ազջիկ Խանտիւթ խանըմի գէօվանք անենք Տաւիթին: Մէկ ճեոյճագլոխ հայ մը մեր ընկիւռներ առեց, զարկաւ մեր զլխուն, ճամփեց»: Տաւիթ խանեց քանի մը սոկի տվեց ինոնց, որ թաղայ ըլնկիւու առնեն, դան Խանդութ խանըմ գէօվանք»: Տաւիթն կէօ եսեմ, առաց ինոնց: Աշղներ իրենց թաղայ ընկիւռներ առին, նստան Տաւիթի առջեւ, էն վերի գագառանքն արին:

105. — Տաւիթն խարցուց տիւք քեանի՞ օր ձեր Երկրէն չում էս տեղն էկաք: — Ասին քառառւն օր. 40 օր էլ անձախ էրթան կհառնենք: — Տաւիթն առաց, տէ 39 օր ճամբախ գնացէք, ես էս օր (39-րդ օր) ճամպախ կէլնեմ ձե կխառնեմ: Տաւիթ ուր խօսք տվածին պէս 39 օրից սորտ ճամպախ էլաւ, տէսու օր 40 զիւթան կըանի գաշտի մը մէջ. զիւթնորներ Տաւիթին կանչեցին, որ գեայ խաց ու տի: Տաւիթ խառցուց, թէ շատ խաց ունի՞ց: — Խաց, ասին, 40 զիւթնի մէկ շարթուան խաց ունի՞ք: Տաւիթ պիթիւն խացէր՝ օր 40 ջրվալ¹ էր, ուր առջեւ տառակիել տվեց: Էտ 40 ջրվալ խաց՝ զըմէն էլ կերտւ մէկ բրդում չթողեց:

106. • Մշակներ մէկմէկու առին. «Մե էլ խաց չմնաց, ինչևս պիտի գիւթան անինք»: Տաւիթն էս խօսք լսաւ, առաց ինոնց. «Բէրեք ձեր 40 զիւթնի զընճներ, կապէք իմ ձիու զանկիւներ²: Ես ձեր շարթուան անելիք գիւթանն անեմ էրթամ»: Ինոնք էլ քերին 20 զիւթան մէկ զանկիւն՝ 20 էլ՝ էս մէկէլ զանկիւն կապեցին: Տաւիթ 40 տիր գնաց էկաւ, տաշտ մը տեղ ուեցուց:

107. • Մշակներ տառձան առին Տաւիթին. «Կտայքըոյ ձիու խունարն էր, քըոյ չէր»: Էս խօսքի վերէն Տաւիթ ձիուց իջաւ վար, 40 զիւթնի զնճներ կէս մէկ ձեռ բռնեց, կէսն մէկէլ ձեռ,

1 Պարկ, մազէ:

2 Ասպանպակ.

բաթ¹ էլ ինք տարւաւ իրե, սորա ասաց. «Կայնէք. որ իմ թրի խու-
նարն էլ ձե նշանց առմ»: Բիրեց 40 գութնի սարուածք կէօլէօ-
նեց մէկ տեղ. մէկ թուր իթալ², 40-ն էլ ըրդեց Մշակներ առին.
«Միայն տէր քըոյ տուն քեակի. տիւ մեր ուաթալն (թախըմ)
ընչի ըսնայ արիթ»:—Տաւիթ ճուզապ տվեց թէ, հապայ իմ ձիւ-
և իմ խունար աէսաք, ալէտք էր որ իմ թրի հունարն էլ տես-
նէք: Առէք ձե մէկ մէկ կուց ոսկի, տարէք շաբթուս ձեր գու-
թընքանք շինել ավէք»: Ինք խէջաւ ու քշեց:

108. Խանդիւթ խանըմ, որ սրտմաշ ինոր գետալն կաչքէր, ուր խա-
լայիս ճամփնեց փէնճարէն³, որ աչքի, թէ մարդ կերեայ ճամփու-
մէջ: Խալայիս տառձաւ խանըմին ասաց. «Կէօ մէկ ձիաւոր մը
մէջ էրկինք մէջ գետինք կուգեայ՝ անճախ կերէլայ»: Խօսք տը-
հայ ըէրանն էր, Տաւիթ խասաւ վեր տարզիս և տուան: Մշակներ
էկան, որ ձիւ գլէօլս բռնեն, Տաւիթ թող չտվեց. համայ ար-
ձայս⁴ մէց փակախ: Են տեղ 40 ից մէկ պակաս ձե կեր, էն 59
ձիեր քիւռկու ճալալին տվեց ուր տեօշի տոջե, ճղթեց կատաց
պատ. ինանց զըմինի տարման կերաւ: Խալայեղներ խապար տա-
րան Խանտիւթին, առին. «Զին ուր խունար խռճեց⁵, մնաց Տար-
ւիթին»:

109. Աթուս մը թալեցին Տաւիթի տակ, նստաւ մէջ էն⁶, Տա-
ւիթներուն, որ ուրմէն առաջ աշղներ իկեր ըերեր էին: Են 39
Տաւիթներ՝ որ սեղան տրած խաց կուտէին, երենց թրեր ձրւ-
տեր⁷, տրեր ին սեղնի տակ, նոր եկող Տաւիթն ըրգելու, որ խա-
նըմն ուրենցմէ մէկին մնար: Խալայեխներ էկան սեղան ուղեցին,
որ նոր եկող Տաւիթին կեր ըերեն, ինոնք էլ ասին. «Թօղ դայ, խետ
մե ուախ»: Մաքերնեն էն էր, որ Տաւիթն սպանէին, քիւնչի ինոնք
գիւտէին, որ քաջ Տաւիթն էն էր:

110. Խանըմի խօսքով խալայեխներ էկան կտրին Տաւիթին առին,
որ սեղան ինոնցմէ առնի տայ: Տաւիթն ձեսն իտու սեղան,
թալեց էն տէխ բարկանալով: Են գեալս տեսաւ՝ որ չըլուա⁸
թրեր սեղնի տակ են, առեց զըմէն մէկ տեղ ծալեց ծալմէկեց,
օրօիկեց, որ կապեն ուր ձիու թամքի վէրէն:

111. Երբ որ Տաւիթին խաց ըերեն, պողիկ մը⁹ էլ գինի ըերեն
խետ: Տաւիթն ասաց. «Էս գինին ձիկ չի կշատցուցի. իսոր
կարասն ուր է»:—Ասին. կէօխան¹⁰, Տաւիթ առեց կարաս. տնկեց
ըերենին, մէջ տրայ շուռ տվաւ պօղազն վեր, գինալցաւ, գնաց
պառկաւ փակախ:

1 Շըշան: 2 Թալից. բցեց. 5 Առամուս, պատոհան:

4 Մեծ դուռ: 5 Արծակ: 6 Ցըցոց, ցոյց տուաւ: 7 Մերկացրել:

8 Մերկ: 9 Հողէ ջրի եւ մանաւանդ դինու փոքր աման, որ մէջ-

անդից ունի բարակ փող, որով խմում են: 40 Անաւաղիկ. ահաւանիկ:

112. Խանտիւթ խանըմ խապար ճամփեց Տաւեթներաց, որ էր-թան խառ պատշէն լվացվեն ոէրսփուեն¹, առաւառւն շոտ կեան ուր քէօշկի² առջեկց մէկ մէկ ընցնեն. Էն գեալի ես որի սրակ զէրէն որ խնձոր զարնեմ, իմ խաւնածն էն ի: Էն 19 Տաւեթներ զարդբուան էկան. քէօշկի առչե կայնաւն, խանըմ տէսաւ, որ մէկ պակասի, ճիւապ ճամփեց, որ մնացած Տաւեթ էլ գեայ: Եկաւ ինսոց խետ կայնաւ: Խանըմ էլու փէն ճարէն իրեք տիր ինձոր թալեց, իրեք տրուն էլ Սամնայ Տաւեթի ոռատի զէրէն տիպաւ: Էս բան որ տէսան միւս Տաւեթներ, թող տվին մէյ մէկ ուր երկիր փախան:

ԺԱ.

113. Կապոտ Կողայ թագաւոր կանչեց Տաւեթին ասաց. «Ես քե կանչեր եմ, որ իմ աղջիկ տամ քե, ամայ՝ իմ աղջկան տիւշման-ներ կայ, որ սիրու տէր եղեր են վէրէն, որ քե ճամփեմ, կանաս էրթայ ինոնք սպանիս: — Խբամանք, ասաց: — Թագաւոր տպոպըց, Տաւեթ, թէ էո օր կնայ նոտի վեր բաղնսի ճամփին, իմ ախ-չիկ ուր խալայեխներով 20 իտե, 20 առջե ինկած, ինքն մէջ տեղէն քէլելով կէրթայ պաղնիս. Երբ բաղնսից տիւրու կէլնի, ինոր քէօղք վերցու խաւնի, քե խալալ էլնի:

114. Տաւեթ տէսաւ որ խանըմ գնաց բաղնիս Էկաւ, քուն խա-լայեխ առջվէն քսան իտևէն, ինքն մէջ տեղ քետն հմէն բանձր, կուգեայ: Տաւեթ ինոր քէօղք վէրուց տեսաւ, խաւնաւ, մէկ պագը մէկ իրեսէն, մէկ պագը էլ մէկէլ իրեսէն որ առեց, խա-նըմ բան չասաց. Երբ որ մէկ պագը էլ ճակաբց առեց, խանըմ կէօմի³ մը իդարկ Տաւեթին, քթէն փութաւ արուն էկաւ: Քիւնչի թագաւոր էրկու պագի մննակ իդին տվեր էր, էս բանի վէրէն Տաւեթ կայր⁴ արաց, գնաց փակեախ փայեն⁵ փորեց, մտաւ մէջ: Ինքն իրեն ասաց. Աղջիկ մը որ իմ քթէն արուն խանի, էլ իմ ապրել խարսամ իս:

115. Թագաւոր լսեց Տաւեթի ինաւ անել, ուր աղջկան ասաց. «Ինչին որ սիրու կոտըեցիր, ըսկուն էլ պիտի էրթառ ինոր սիրան առնեսու: Աղջիկն առաւ փունջ մը վարտ, գնաց մօտ Տաւ-եթ շատ գէօրէօվըց⁶. վարտն էլ տվաւ քթին: Տաւեթ կէօփ

1 Մարրուին 2 Պատշկամբ 3 Բոռոնց, բոռոնցքի հարուած:

4 Երդում: 5 Չորցուցած կու: 6 Գորովիլ, փայփայիլ:

մը զարկեց վեր ազջիան թևին, թե թիւլցաւ կախվաւ մօ-
տէս Աղջիկը ւալով տառձաւ մօտ խէս՝ եղելութեն պատմեց:

116. Թագաւոր առեց ուր կնիկը ու աղջիկն, գնացին Տաթին
տես: Տռնէն տիւրու լսան, որ տաւիթ կը խնարէ Աստծուց ուր
խոզին առնելու, մասն մօտ: Թագաւոր ասաց, իմ աղջիան սիրու
տէր իր, Պարան Պոօշ, պարան Բւէք ֆունտայ:¹ տէւ էլջի օղօրկէր
ին կո իւ կուլզին: Տաւիթ թուաւ ձիու քեամտի, որ էրթէր ինսնք
սպանէր: Թագաւոր ասաց, «Պէտքէ որ առաջ ձեւ տանենք
եկեղեցին վեր իրարու պոակենք, ոորա էրթաս»: — Տաւիթ՝ չէ,
ասաց, Ես չում ինսնք չսպանեմ քըոյ աղջիկ ձիկ խարամ էլնի:
Թագաւորն ասաց. «Ինսնք տէլ չեն իկե, ինսնց խեծել մենակ իկե
տաշտ: Տիւ տեաշ² խեծի խետ պիտի կուլես, չում ինսնք գեան:
Խեծել ջանդելէն սորա պիտի էրթաս Քարէկալ անւոր սարն,
Էնակ պօզպտէ սուր մը կայ, քըոյ թուր վեր ինոր պիտի փոր-
ձիս. թէ որ կարեց, գեացիք որ պիտի յաղթես տէերուն»:

117. Պարան Պոօշ, Պարան Բւէք Ֆանտայ տէւեր կուգեան էն
տեղ, քե կասեն էրթանք տաշտի մէջ կուլենք, աեւ չէ ասես,
էս տեղ պիտի կուլենք»: Կուլելու կերպն թագաւորից ուսնելէն
ոորայ: Տաւիթ տառձաւ Խանտիւթ խանըմին ասաց. «Եօթն օր
իմ ճամբուխ կաչքես, թէ որ չեկայ, կուգեաս իմ լեշ կիտուտես,
էն լեշերաց մէջ կստնես, իխորես. իմ նշանն էլ էս ի, որ թեհս
տակը մոէ խաչ մը պիտի ինտնես»:

118. Տաւիթ քշեց Պարան Պոօշի խեծի վերէն. ասաց.

«Օհսեալ բարերար Աստված,

Խամօք շատ էր մեծ թագաւորուն:

Որ ինչ քիւնէք, արթուն մնացէք,

Որ ինչ արթուն էք, ձիանք թամքեցէք.

Չառէք, Տաւիթ գոզ էք, գողութնով էկաւ:

Խեծել ուր պատրաստութեն որ տէսաւ, Տաւիթ քեաշեց
թուրն կեծակին, ասաց.

«Յիշեմ քեւ տերն կենդանին».

Մարութայ բանձր Աստուածածին,

Խաչն պատրաստին, վեր աջն թեին»:

119. Խկաւ մէջ խեծին իրեք օր ըրդեց. ըսկում արնէ գետ
էլու, որ սաղ մար տեխն էլ կիլորէք կիսեխտէր: Իրեք մարտ մեռ-
նակ աղատեց, ձեռը ստ կապեց արեց տարի մը գըլէօխ, որ Խան-
զիւթ խանըմին մշակ տանի: Էն տեղէն գնաց Քարէկալ անւոր
սարն, տէսաւ պօզպտէ սուն, որ խաղարաւորներ իկեր ին, չին կար-
ցե կարել. քաշեց թուրն կեծակին, յիշեց ուր Տէրն կենդանին,

1 Թիւաւոր, Թոսուցիկ: 2 Նախ, առաջ:

Մարտութայ բանձը Աստուածածին, խաչն պատարագին վեր աջ
թերին՝ զարկեց պօղպատէ սուն ըսկուն կարեց, որ կառը կտորի
վերէն մնաց: Խնդն կարծեց որ չկտրեց: Խնոր խամար յուսահա-
տեցաւ, զինք անիծեց ու կստացաւ: Խորէն յիշեց Տէրն կենդա-
նին, Սովորարի կողմի քամին էկաւ, կարած սուն որ շրջեց.
տառձաւ զինքն օխնեց, բժշկուաւ:

120. Պըն Պուշչ, պլն Բվկը Ֆուլնտոյ տէւէր էն տեխէն էկան
տեսան, որ Տաւիթ նստե Քարէկալ:—Ասին, Տաւիթ, Կապուա
Կողա թաղաւորու մարդ տիւ ես:—Խո, ասաց:—Ասին տէ
էրթանք տաշա կովենք:—Տաւիթն ասաց, մենք պիտի կովենք,
տաշտ չեմ էրթայ:—Խոնք էլ հաւնեցան ու ասին, Ենչխ պիտի
կովենք:—Տաւիթն ասաց կիւռզով Տեաշ տիւ ձիկ զոր իրեք
կիւռզ, թէ որ սպանեցիք, իմ արին քե խալալ էլնի. թէ չէ, իրեք
կիւռզ էլ ես քե զարնեմ:

121. Յարտն Պուծ զնաց չում Հալապ՝ երիշ քեաշեց էկաւ մէկ
կիւռզ զարկաւ Տաւիթն, թօղ առւմանն էլու: Տէւն ասաց,
«Տաւիթ, խոզ ես, խոզ տառձիր»: Տառձաւ տէսաւ, որ սազ կէօ
կայներ ի Տաւիթ, նորէն ասաց, «Տաւիթ, կայիմ կաց տէօրին
շատ պիտի զատանամ զատանամ»: Գնաց չում Պազտատ, Պա-
սըրայ երիշ քեաշեց¹ էկաւ, կիւռզ մը էլ զարկեց Տաւիթի վզին,
վիզ քէթթզաւ², Տաւիթ ուր վիզ ուր ձեռնով շիտկեց, կայնու:
Տարձաւ ասաց Տաւիթն: «Ըստքիս³ պիտի էլնեմ խետ էրկուց
զարնեմ չում անտիւնտէ իջնես: պատրաստ կաց: Տէւն էլու խէտ
էրկուց, Տաւիթն էլ ուր մզրխին ազու քսեց, անկեց ուր ճակ-
տի տէմ կայնաւ: Տէւ էրկուց իջաւ, որ պիտի զարնէր, ինկաւ
վեր Տաւիթի մզրզի ծէրին, որտից ծակուաւ, քեամկից էլու
տիւրս, լէշն իջաւ վեր Տաւիթի ձեռաց ինչպէս սար մը:

122. Տաւիթի ձեռք իրեք օր մնաց լէշին տակը, չկարցաւ ուր
տիւրս խանել, քիւնչի մոռցաւ ուր տէրն յիշել: Էն ոհաթին
Զէնով Ցովան տէսաւ, որ Տաւիթի ասաղ նվազերէր, թռաւ ու-
լայէղ ձիու քեամակ, որ աչք խփոց խառաւ Տաւիթի մօտ, բացց
ճամփու վերէն Տաւիթի կապած իրեք մարտեր որ տէսաւ, ուր
պռտեց ինոնց վէրէն, արօրեց, ոօրայ խասաւ մօտ Տաւիթ:
Ասաց. «Տաւիթ, էտ ինչ հալն ես ինկե»:—Ասաց. էս իրեք օր ի, որ
ձեռքս մնացեց լէշին տակ, չեմ կանայ խանե տիւրս:—Ասաց զայի 4
քըոյ տէր մոռցեր ես: Ասելուն պէս՝ Տաւիթն ասաց,
«Յիշամ քե Տէրն կենդանին,

Մարտութայ բանձը Աստուածածին,

1 Թափառել, թափ առնել

2 Նոուիլ:

5 Այս անզամ:

4 Զանար, զուցէ:

Խաչն պլատարագին վեր աջ թևին»:

1.էշն կլորեց գնաց ինկաւ մէջ ձորին:

123. էն օր եօթն օր թըմմեր էր: Տաւիթ ինան (և) ուր խօրօխսպէր մէջ լեռ էրկինք մէջ կէտին ի, էկաւ մաստ տէսան, որ մէկ ձեռւոր մը մէջ էրկինք մէջ կէտին ի, էկաւ մաստ մէջ լեռ ճանակներուն՝ Տաւիթը լէշ կփառատի: Զիաւորի աչքն մէջ լեռ էրկան մարդն, ձին քչեց տեխ էնտեխ, որ խանկաւ, իբար ճանչցան: Տաւիթ Խանդիւթ խանըմին աչքով արեց, էկաւ խօրօխսպօր ձեռք պազեց: Զէնով Յովան Տաւիթից էմացաւ, որ ուր նշանլուն էր, էլաւ տեխ Խանսուն գնաց: Տաւիթ ինան ուր նշանլուն էլ տեխ Կապոտ Կող գնացին:

124. Խանդիւթ ուր խպառ տութէնէն ձին չանձ Տաւիթ տռաջ քչեց: Ենոր խամար Տաւիթ ինատ արաց, տառ ձաւ տեխ Յառ աղջիկն որ իմացաւ, ձիուց իջաւ ուր արփշըմէ թաթեր՝ Սաւանեց, բէօթիկ սաքով ավեց մէջ խերկին, վազեց, պօռաց Տաւիթին, քբոյ Առածու ուրուն էլնի, մէկ մը էլ երեշկի տեխ խերկի անցն: Տաւիթ տարձաւ տէսաւ, որ աղջկան ոտքեր խերկի կութներէն² ըոկում ճզճլեր ի, որ արուն էլե խերկ ծածկէ: Տաւիթը սիրտ իջաւ, Խանդիւթ խանըմը եթող իտեանց, լնքն ինկաւ տռաջ, չուժ խառան Կապոտ Կողը:

125. Թագաւոր էլաւ ինոնց տիմաց, տարաւ ուր սարէն իջեցուց, կանչեց վարդապետներ, քեախանէր եօթն օր եօթ գեշեր խորանիս արին, Տաւիթ պոտեցիցին վեր Խանդիւթ խանըմին:

ԺԲ.

126. Խն ամիս, ինն օր, ին սըհաթ որ ժամանակ ընցաւ, Տաւիթին տղե մը էլաւ՝ անուն տրեց Մհէր: Քառսունք տէլ չէր լըմնցէ, Տաւիթ մտաւ էօտէն, տէսաւ որ Մհէր քներ ի, ամայնաժամ խառնած ժամանակին իրեսի վերլի շոր չէլնի իջնի: Նուֆայի գնաց⁴, թէ տղէն ուր մէջքի պտուղ չի: Խանդիւթ խանըմին առաց. «Եմ աղէկութնի ժամանակ՝ երը որ ես նախաս կառնի կուտաի, իմ իրեսի շոր չում էօտի կամար կելնէր կիջնէր: Էսայ տղէն իմ մօտեց չի, որ ըսկնայ թըու ի»: Խանդիւթ խանըմ ասաց. «Հալայ կաց չում քառսունքէն էլնի, ոորա արի ոէյր արա»: Քառ-

4 Վետարսէ դուլպաններ:

2 Հողակոշաւ:

5 Գերայի

4 Եուֆայի զնալ, շուֆայ տանիկ—կասկածել, հասկանալ:

սունք որ թըմըմաւ, Տաւիթ մատէ էօտէն տէսաւ, որ աղի լրեսի շորի խետ ուրուրոցի ծածկոցն էլ չուժ կամոր կէլնի կիջնի նախառ առած աված ժամանակ: Խանդիւթ խանըմ ներս որ մտաւ, Տաւիթն տասց. Ընցած որ ես քրոյ մեղքն տոի, բայց մկայ կահօնամ, որ աղէն մեր զարմէն ի, մեր չորքն ունի»:

127. Տղէն էլաւ ութ տարէկան, Կապուտ Կաղայ թագաւորի էրկու լաներաց խետ կէրթաք նէճիս կանէր, կըերէր տռւն: Հըմէնք կու տէխն՝ Տաւիթին չին իտե: Տաւիթ ուր կընկեռն կասի. «Ես Մհէրի չափուն որ խասայ, որ մէկ վէրու եղ նէճիր կանէի. մկայ Մհէր կէրթայ ճնճղուկ մը էլ չե կանայ ըերե, չէլնի որ մեր զետրմէն չի»:

